ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

28.06.2014թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին Գիտական խորհրդի 35 անդամներից 26-ը: Նիստը վարում էր մասնաճյուղի գիտական խորհրդի նախագահ, տնօրեն Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրենը, բացելով Գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ ԻՄ-ի 2014թ. բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում

/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/

2. 2014-15 ուստարվա մասնագիտությունների ցանկի քննարկում

/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/

3. Կառուցվածքային փոփոխություններ ԵՊՀ ԻՄ-ի կազմում

/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/

4. ԵՊՀ ԻՄ-ի զարգացման ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի մասին

/Զեկուցող Ա.Շ. Մարգարյան/

5. ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2014թ. հարցման արդյունքների մասին

/Զեկուցող Ա.Շ. Մարգարյան/

6. Ընթացիկ հարցեր

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

ԼՍԵՑԻՆ. - «ԵՊՀ ԻՄ-ի 2014թ. բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում» հարցի կապակցությամբ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն Ս.Ա. Առաքելյանի զեկուցումը:

Նա հանգամանալից ներկայացրեց ԵՊՀ ԻՄ 2014թ. բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման արդյունքները ըստ մասնագիտությունների, անցկացրեց համեմատական վերլուծություն 2013թ արդյունքների հետ: Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների կողմից տրված կարծիքներին և առաջարկներին, մանրամասն վերլուծվեց թերությունները և առավելությունները:

Մասնավորապես նշվեց, որ այս տարի, 2013թ-ի համեմատ, վիճակը բարելավվել է ԵՊՀ ԻՄ-ի համար բրենդային հանդիսացող Կիրառական արվեստի ֆակուլտետեում, մասնավորապես ամփոփիչ ատեստավորման նախագահը նշել է, որ մեր ուսանողները որակական հատկանիշներով բավականին բարձր են Գյումրու և Երևանի մանկավարժական համալսարանների համապատասխան մասնագիտությունների շրջանավարտներից որի համար ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս.Ա. Առաքելյանը շնորհակալություն հայտնեց Լ. Լաճիկյանին ամբողջովին ԵՊՀ ԻՄ-ին նվիրվելու և դրական փոփոխություններ մտցնելու համար: Նա իր գոհունակությունը հայտնեց նաև Ա. Միրզոյանի կատարած աշխատանքից, որի շնորհիվ այս տարի բավական բարձր մակարդակով կատարվել է երեք ավարտական աշխատանք քանդակագործությունից: Նշվեց, որ անելիքներ կան նաև գոբելենի թեմատիկայի ընտրության հարցում, նախատեսվում է զարգացնել նաև վիտրաժային արվեստը: Տնօրենը նշեց, որ Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողներին քաջալերելու համար մասնաճյուղը նրանց կտրամադրի նյութական աջակցություն օգտագործվող նյութերի տեսքով /վատմաններ, թելեր և այլն/, ինչպես նաև պայմանավորվածություն

է ձեռք բերվել Իջևանի քաղաքապետարանի հետ Իջևանի քաղաքային պատկերասրահում մշտական ցուցահանդեսներ կազմակերպելու համար:

Նշվեց, որ դրական տեղաշարժ չկա բնական գիտությունների ֆակուլտետում, նվազել են ուսանողների թվաքանակը և գերազանցությամբ ավարտող շրջանավարտների թիվը:

Գոհացուցիչ արդյունքներ են գրանցվել <<Սերվիս>> մասնագիտությամբ, մինչ դեռ անալիքներ կան <<Տնտեսագիտության տեսություն>> մասնագիտությամբ, որտեղ պրակտիկ գիտելիքների յուրացման հարցում կան խնդիրներ, դրանք կարգավորելու համար անհրաժեշտ է առավել ուշադրություն դարձնել գործնական և սեմինար աշխատանքների, ինչպես նաև պրակտիկաների առավել արդյունավետ կազմակերպելու վրա :

Անհամեմատ բարձր արդյունքներ են գրանցվել <<Մանկավարժություն և հոգեբանություն>> մասնագիտությամբ առակա և հեռակա ուսուցման շրջանավարտների մոտ:

Գոհացուցիչ արդյունքներ են գրանցվել <<Հայոց լեզու և գրականություն>>, <<ֆրանսերեն լեզու>>, մասնագիտություններով:

Ստորև բերված է 2013-2014թթ շրջանավարտների թիվը ըստ մասնագիտությունների:

/աղուսյակ/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան Ա. Ցուցուլյանը, Տնտեսագիտության ֆակուլտետեի դեկան Ն. Խուդավերդյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկան Ա. Այվազյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետեի դեկան Վ. Ալեքսանյան: Ելույթ ունեցողները ներկայացրեցին հարցի վերաբերյալ իրենց հուզող հարցերը և առաջարկները:

ԵՊՀ պրոռեկտոր Ա. Գրիգորյանը, որը գոհ մնալով ներկայացված արդյունքից, շեշտեց որ արտաքին դրական կարծիք ապահովվել է նաև ճիշտ տարվող մենեջմենտը: Անդրադառնալով կիրառական արվեստի ֆակուլտետում արձանագրված առաջընթացին նա շեշտեց, որ կարելի է անդրադառնալ այդ ֆակուլտետեում մագիստրատուրան բացելու խնդրին: Ա. Գրիգորյանը փաստեց, որ այլալեզու գրականությունից ուսանողները քիչ են օգտվում նաև ԵՊՀ-ում, և, որ այդ

խնդիրը լուծելու համար նախատեսվում է, որ գոնե մեկ առարկա դասավանդվի օտար լեզվով:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ. - «ԵՊՀ ԻՄ-ի 2014-15 ուստարվա մասնագիտությունների ցանկի քննարկում» հարցի կապակցությամբ տնօրեն Ս. Ա. Առաքելյանի զեկուցումը: Նա ընդհանուր ներկայացրեց ԿԳՆ-ի կողմից ներկայացված մասնագիտությունների նոր ցանկը, որտեղ չկան մեր որոշ մասնագիտություններ, կարճ և բովանդակալից ներկայացրեց խնդրի էությունը և առաջարկեց պատկան ստորաբաժանումներին այդ ուղղությամբ մշակել արդյունավետ ռազմավարություն, որը կբխի նաև մեր արտաքին շահակիցների շահերից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ա. Գրիգորյանը նշեց, որ բուհերի դիմորդների թիվը նվազում է, մրցակցությունը բարդանում է, այդ իսկ պատճառով պետք է հստակեցնել այդ ուղղությամբ ռազմավարությունը, պետք է ուշադրություն դարձնել հեռակա ուսուցման որակի վրա, քանի որ հեռակա ուսուցման դիմորդների քանակը աճում է համեմատած առկա ուսուցման դիմորդների հետ: Նա առաջարկեց առաջիկա գիտխորհրդի նիստի օրակարգում ընդգրկել հեռակա ուսուցման որակի հետ կապված հարց: Նա նաև շեշտեց, որ ԵՊՀ –ի՝ արտասահմանյան բուհերի հետ ուսանողների փոխանակման համագործակցության շրջանակներում կարող են իրենց մասնակցությունն ունենալ նաև ԵՊՀ ԻՄ-ի լավագույն ուսանողները:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2. Ընդունել ի գիտություն և սեպտեմբերյան գիտխորհրդի օրակարգում ընդգրկել հարց՝ կապված հեռակա ուսուցման որակի հետ:

ԼՍԵՑԻՆ. - «Կառուցվածքային փոփոխություններ ԵՊՀ ԻՄ-ի կազմում» հարցի կապակցությամբ Ս. Ա. Առաքելյանի զեկուցումը: Նա, մանրակրկիտ և հիմնավորված

կերպով վերլուծելով ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ գործողությունների պլանը, առաջարկեց կատարել հետևյալ կառուցվածքային փոփոխությունները.

Լուծարել Ընդհանուր ֆիզիկայի, Անտառագիտության, Բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնները, ձևավորել Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների և Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոններ, Գծանկարի և գունանկարի ամբիոնը վերանվանել Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոն, Դեկորատիվ կիրառական արվեստի ամբիոնը վերանվաներ Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոն, Պատմության և քաղաքագիտության ամբիոնը վերանվանել Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոն: Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պարտականություններից ազատել Ա. Ցուցուլյանին, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պարտականնությունններից ազատել Կ. Այվազյանին: Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Մ. Զաքարյանին: Կիրառական արվեստի ֆակուլտետեի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Ա. Մարգարյանին: Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Ա. Ցուցուլյանին: Վարչատնտեսական վարչության պետ նշանակել Կ. Այվազյանին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՄԿՈԱ բաժնի վարիչ Ա. Մարգարյանը, իրավախորհրդատու Ա. Հովհաննիսյանը և ուրիշներ: Ելույթ ունեցողները դրական արտահայտվեցին ներկայացվող փոփոխությունների կապակցությամբ և առաջարկեցին առանց փոփոխությունների հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Լուծարել Բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2. Լուծարել Ընդհանուր ֆիզիկայի ամբիոնը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

3. Լուծարել Անտառագիտության ամբիոնը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

4. Չեղավորել Ծրագրավորման ի ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոն:

ՈՐՈՇԵՑԻՆ.

5. Չեղավորել Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոն:

ՈՐՈՇԵՑԻՆ.

6. Գծանկարի և գունանկարի ամբիոնը վերանվանել Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոն:

ՈՐՈՇԵՑԻՆ.

7. Դեկորատիվ կիրառական արվեստի ամբիոնը վերանվանել Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոն:

ՈՐՈՇԵՑԻՆ.

8. Պատմության և քաղաքագիտության ամբիոնը վերանվանել Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոն:

ՈՐՈՇԵՑԻՆ.

9. Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պարտականություններից ազատել Ա. Ցուցուլյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

10. Կիրառական արվեստի ֆակուլտետեի դեկանի պարտականություններից ազատել Կ. Այվազյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

11. Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Մ. Զաքարյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

12. Կիրառական արվեստի ֆակուլտետի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Ա. Մարգարյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

13. Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ժամանկավոր պաշտոնակատար նշանակել Ա.Ցուցուլյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

14. Վարչատնտեսական վարչության պետ նշանակել Կ. Այվազյանին:

ԼՍԵՑԻՆ. - « ԵՊՀ ԻՄ-ի զարգացման ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի մասին » հարցի կապակցությամբ Ա. Մարգարյանի զեկուցումը: Ա. Մարգարյանը բավական մանրամասն և բովանդակալից տեսանյութերի միջոցով ներկաներին

հաղորդեց կատարված հետազոտությունների արդյունքները: /ամբողջությամբ կցվում է հաղորդումը/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. ԵՊՀ պրոռեկտոր Ա. Գրիգորյանը և ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Առաքելյանը, նրանք գոհունակություն հայտնեցին կատարված աշխատանքից:

ՈՐՈՇԵՑԻՆ.

15. Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ. - «ԵՊՀ ԻՄ ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2014թ. հարցման արդյունքների մասին» հարցի կապակցությամբ Ա. Մարգարյանի զեկուցումը: Նա, նշելով, որ կատարված հարցումներին մասնակցել են շրջանավարտների 96 տոկոսը, մանրամասն տեսանյութերի միջոցով համեմատությունների մեջ ներկաներին հաղորդեց կատարված հետազոտությունների արդյունքները: /ամբողջությամբմ կցվում է հաղորդումը/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս.Ա. Առաքելյանը և ԵՊՀ պրոռեկտոր Ա. Գրիգորյանը: Ելույթ ունեցողները առաջարկեցին հարցումներ անել նաև ԵՊՀ –ում ուսումը շարունակող մեր ուսանողների շրջանում, առանձնացնել առկա և հեռակա ուսուցման հարցումները և վերլուծությունները, արդյունքներում առաջացած տվյալներից փորձել պարզել հարցման արդյունքում ստացված ճշգրիտ արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ.

16. Ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ. – Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ի պֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթական ծրագրերի իրականացման արդյունքների մասին Ն. Ստեփանյանի հաղորդումը: /կցվում է ամբողջությամբ/

ՈՐՈՇԵՑԻՆ.

17. Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ. Գիտական խորհրդի կազմի փոփոխության մասին Մ. Աթոյանի հաղորդումը

ՈՐՈՇԵՑԻՆ.

18. Հաստատել փոփոխված կազմը/կցվում է/

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար_____Մ.Ս. ԱԹՈՅԱՆ

28.06.2014թ.